Գուրգեն Մահարի

Հնձաններ

Շողշողում է քո բախտը իմ աչքերի դէմ խնդուն,
Դէմս ծփում է ահա ովկիանոսը քո բերքի,
Հարստութի՛ւն երկնային, երկրային նոր յարութիւն,
Օ՜, հնձաններ ոսկեգուռ, օ՜, հնձաններ իմ երկրի:

Դո՛ւք, մե՛ծ այգու մշակներ, դո՛ւք մեծ դաշտի հնձուրներ,
Ուղենիշներ կենդանի մեր անընդհատ վերելքի,
Ձեր քրտինքովն են շողում, ձեր քրտինքովն են ցնծում
Հնձանները ոսկեգուռ, հնձանները իմ երկրի:

…Օ՜, հնձաններ ոսկեգուռ, օ՜, հնձաններ իմ երկրի,
Որ որոտում էք այսօր նման անլուր մի երգի,
Դուք, անգրաւ ոստաններ առատութեան ու բերքի,
Որ բարձրացաք արիւնոտ հողի վրայ երէկի…

Օ՜, հնձաններ ոսկեդուռ, օ՜, ոստաններ իմ երկրի…